

Մեծարանքի բացառիկ երեւոյթ

Կիրակի, 7 Յունիս 2015-ին Օթթաուայի Հայաստանի Հանրապետութեան դեսպանատան մէջ, Տիկին Մարիա Եզանեանի յատուկ հրաւերով, նշուեցաւ ՀՕՄ-ի Գանատայի Շրջանի հիմնադրութեան 25-րդ ամեակը: Սոյն հրաւերին ընդառաջեցին 25 տարիներու ընթացքին նախկին եւ ներկայ Գանատայի Շրջանային վարչութեան 27 ընկերուհիներ, ինչպէս նաեւ Օթթաուայի «Սեւան» մասնաճիւղի 3 վարչական ընկերուհիներ: Ճաշկերոյթ- հրաւերին ներկայ գտնուեցան նաեւ ՀՕՄ-ի Կեդրոնական վարչութեան փոխ-ատենապետ ընկի. Նայիրի Շահինեան, որ իր կարգին վարած է Շրջանայինի վարչական պաշտօն եւ հիւրաբար՝ ընկի. Համեստ Պեօճէքեան, ատենապետ Հայաստանի «Կռունկ» մասնաճիւղին:

Ջերմ ընդունելութեամբ ու հարազատ խօսքերով, տիկին Եզանեան բարի գալուստ մաղթեց ներկաներուն: Ան բարձր գնահատեց ՀՕՄ-ի գործունեութիւնը ու յատկապէս նշեց այս կազմակերպութեան մէջ գործող անդամներու աշխոյժ եւ կարեւոր դերը ի նպաստ հայ ժողովուրդի բարօրութեան:

Մտերմիկ ու շատ հարազատ ընդունելութեան զուգահեռ, ներկաները վայելեցին երիտասարդ եւ տաղանդաւոր հայ երաժիշտներու բարձրորակ ելոյթները: Դաշնակի վրայ ելոյթ ունեցաւ Մայքըլ Թուրապեան Սոգարդի, Պէթովէնի, Օսքար Փիթըրսընի եւ Կոմիտասի «Շուշիկի» կտորներով: Իսկ ջութակի վրայ գերազանցեց տասնչորսամեայ Տիանա Ատամեանը նուագելով Կոմիտասի «Կռունկը»:

Գանատայի Շրջանային վարչութիւնը առ ի երախտագիտութիւն, տիկին Եզանեանին յանձնեց ՀՕՄ-ը խորհրդանշող յիշատակի նուէր մը: Թէեւ դժուար, սակայն տիկին Եզանեանի հիւրընկալ, ժպտուն ու կրկին հանդիպելու ջերմ խոստումներէն քաջալերուած, հոգեպէս լիացած ու կազդուրուած հրաժեշտ տուինք մեր «փոքրիկ հարենիք»- էն: